ԱՐԱՍ ԴԱՎԹՅԱՆ

«ՔԱԴՐՈՅԱԿԱՆ» ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ ՅԱՔՈՒՓ ՔԱԴՐԻ ՔԱՐԱՕՍՄԱՆՕՂԼՈՒԻ «ԱՆԿԱՐԱ» ՎԵՊՈՒՄ

Թուրքական գրական կյանքում քեմալական շարժման, Քեմալ Աթաթուրքի ջատագովությամբ աչքի ընկնող գրողների մեջ իր ուրույն գրական ժառանգությամբ, հասարակական-քաղաքական ակտիվ գործունեությամբ հատկապես առանձնանում է թուրք գրող Յաքուբ Քադրի Քարաօսմանօղլուն (1889-1974): Նա 20-րդ դարի թուրք գրականության խոշորագույն դեմքերից է՝ նովելիստ, հրապարակոս, արձակագիր, պոետ, մեկնագրությունների և հուշագրությունների հեղինակ[1]:

Սաքարիայի պատերազմում հունական ռազմուժի նահանջով ավարտվող «Օտարի» ("Yaban", 1932)[2] շարունակությունն է ներկայացնում Յաքուբի Քադրիի 1934թ. գրած «Անկարա» ("Ankara")[3] վեպը: Այս երկու վեպերի համատեղ ընթերցումը հնարավորություն է տալիս հետևելու Յաքուբի Քադրիի ստեղծագործական ուղղուն և գափարական զարգացմանը: «Օտարում» նա ներկայացնում է գյուղացու թշվառ վիճակը, գյուղացիների անասելի բարոյալքությունը, փորձում է իրապաշտական մեթոդի կիրառումով վեր հանել կյանքի արատավոր կողմերը, մինչդեռ «Անկարայում» առաջ է տանում համատեղ ջանքերով այդ իրավիճակից դուրս գալու հնարավորության և իր երազած Թուրքիայի ստեղծման գափարը: Այլ կերպ ասած՝ «Օտարը» իրապաշտական է, իսկ «Անկարան» կարելի է բնորոշել որպես ուտոպիստական ստեղծագործություն:

«Օտարում» վեր հանած խնդիրների լուծման հնարներն ու միջոցները նա առաջադրում է «Անկարա» վեպում: Այստեղ Քադրին ժամանակային առումով ընդգրկում է իր ապրած տարիների Թուրքիան, նրա ոչ վաղ անցյալն ու ներկան, նաև ուրվագծում ապագանէ Գործողությունները սկսվում են քեմալական շարժման օրերին և ձգվում-հասնում են մինչև 1940-ական թթ.: Այս վեպը գրելու տարիներին Յաքուբ Քադրին շարունա-

---

[1] Քադրիի գրական գործունեության մասին մանրամասն տե՛ս նաև Լ. Սահակյան, Ա. Դավթյան, Յաքուբ Քադրի Քարաօսմանօղլու. գրական դիմանկարի փորձ, «Կանթեղ», գիտական հոդվածներ, հ. 1(42), «Ասողիկ» հրատ., Երևան, 2010, էջ 41-50:

[2] Տե՛ս Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, İletişim Yayıncılık, İstanbul, 1948, 221s. Տե՛ս նույնի՝ Yaban, İletişim Yayınları, 1970, s. 262.

[3] Տե՛ս Yakup Kadri Karaosmanoğlu, *Ankara*, yayına haz. Atilla Özkırımlı, İletişim Yayıncılık, 1987, 264 s.

կում էր հրատարակել 1932 թ. իր իսկ հիմնադրած «Քադրո»[4] (Կադր) ամսագիրը: Շուտով «Քադրոն» մեծ հեղինակություն է ձեռք բերում, նրա շուրջն են հավաքվում մեծ թվով մտավորականներ, և այն դառնում է Թուրքիայի ամենից հանրածանոթ և արմատական ազդեցություն ունեցող ամսագրերից մեկը£ Շնչեթ Սուրեյյան հունվարի 15-ին "Türk Ocağı" («Թուրք օջախ»)[5] Անկարայի գլխավոր կենտրոնում «Հեղափոխություն և կադրեր» վերնագրով մի դասախոսություն է կարդում, որին մասնակցում էին թե՛ «Թուրք օջախների», և թե՛ ժողովրդահանրապետական կուսակցության (CHP) անդամները: Այս դասախոսությունը հետաքրքրությամբ ընդունվեց «Թուրք օջախների» ներկայացուցիչների և որոշ քաղաքական գործիչների կողմից: Հետագայում դասախոսության տեքստը բազմացվեց և ներկայացվեց պետական պաշտոնյաների կարծիքին£ Շուտով Յաքուփ Քադրին, որպես այս գործընթացի շարունակություն, առաջարկում է ստեղծել «Քադրո» ամսագիր. «Ես պատգամավորներին և ժողովրդին Ժողովրդական Կուսակցության սկզբունքները բացատրելու համար ցանկանում եմ մի ամսագիր լույս ընծայել»: Քադրին այդ մասին տեղեկացնում Մուսթաֆա Քեմալին և ստանալով թույլտվություն՝ սկսում է այն հրատարակել: Ամսագրի հրատարակման առիթով Քեմալ Աթաթուրքն ասել է, որ այն լույս է ընծայվում՝ նպատակ ունենալով յուրահատուկ ձևով և մեթոդով ծառայելու թուրք ազգին և նպաստ բերելու երկրի կառուցմանն ու առաջադիմությանը[6]: Ամսագրում տեղ գտած հոդվածներում խիստ կարևորվում էին Թուրքիայի հանրապետության առաջին տարիներին երկրի կայացմանն ուղղված միջոցառումները: Ամսագիրը դառնում է մտավորականների յուրօրինակ մի շարժման հեռարան: 1932թ. մինչև 1935թ. Ընթացքում հրապարակվել է 36 համար: Ամսագիրի գաղափարախոսներից էր նաև Շեվքեթ Սյուրեյյա Այդեմիրը, իսկ մեծաշնորհը պատկանում էր Յաքուփ Քադրիին, հրատարակչական տնօրենը Վեդաթ Նեդիմ Թորն էր, իսկ Իսմայիլ Հյուսրև Թորին և Բուրհան Ասաֆ Բելգեն հիմնիր գրողներն էին: Ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ ամսագիրը նպատակ ուներ աջակցել քեմալական գաղափարների

---

[4] Տե՛ս S. Palut, *"Kadro dergisi" (1) - Derginin ekonomiye bakışı*. Toplum ve Politika İnstitüsü, Salı, 16 Mart 2010, www.tpc.org.tr/index.php. L. Sunar, Kadro Dergisi/Hareketi ve Etkileri, *Türk Araştırmaları Literatür Derg.* Cilt 2, Sayı 1, Sh 511, s. 28-32. I. Demirci, Kadro Hareketi ve Kadrocular, *Dumlupınar Üniv. Sosyal Bilimler Dergisi*, sayı 15, 2006.

[5] Այս պարբերականը թյուրքականության գաղափարախոսության գլխավոր քարոզչական մարմիններից մեկն էր (տե՛ս I. Üstel, *Türk Ocakları*, Modern Türkiye'de Siyasi Düşünce, Milliyetçilik, İstanbul, 2002, s 263. B. Lewis, *Modern Türkiye'nin Doğuşu*, Ankara, 1998, s. 348)

[6] S. Palut, *"Kadro dergisi" (1) - Derginin ekonomiye bakışı*. Toplum ve Politika İnstitüsü, Salı, 16 Mart 2010, www.tpc.org.tr/index.php.

տարածմանը, մասնավորապես՝ լուսաբանել էթաթիզմի[7] կարևորությունն ու նշանակությունը երկրի հետագա կայացման համար:

Բնականաբար, այդ շրջանի հրատապ խնդիրներն իրենց գեղարվեստական արտացոլումը գտան Քաղրյի «Անկարա» վեպում: Ստեղծագործության առաջին գլխում պատմվում է Սաքարիայի պատերազմի[8] հետևանքով երկրում անորոշություն ծնած անհանգստության զգացումի, բնականոն կենսաձևին փոխարինած ապշեցուցիչ պայմաններում տառապող մարդկանց մասին: «Օտարը» վեպին բնորոշ անզգամ ու անտարբեր գյուղացուն հանդիպում ենք նաև «Անկարա» վեպում: Մի կողմից ընթանում էր պատերազմը, մյուս կողմից՝ ժողովուրդն ապրում էր իր առօրյա հոգսերով, կարծես ոչինչ չէր էլ պատահել:

Երկրորդ գլխում Յաքուփ Քաղրին ցույց է տալիս հանրապետության առաջին տարիներին Անկարայի վերազարվման պայքարով ոգևորված թուրք սպաների անկումը, արքատացումը, բարոյալքումը:

Այս լայն, քաղաքական իրադարձություններով հարուստ ֆոնի վրա հյուսվում է թուրք գրականության համար նոր «հայրենասեր հերոսուհու» կերպարը: Նշենք, որ 1920-30-ական թվականների թուրք գրականության մեջ սկսում է նշանակալի տեղ գբաղեցնել կնոջ թեման: Այս շրջանում կնոջ կերպարի մեկնաբանման մեջ նոր գծեր մտցրեց Հալիդե Էդիփը, որի ստեղծագործություններում կինն առաջին անգամ հանդես եկավ իր բարդ ներաշխարհով: Նրա հերոսուհիներն ավելի հաճախ ուժեղ և ռոմանտիկ կերպարներ էին, հասարակության բարձր խավերի ներկայացուցիչներ, սակայն այդ կերպարների կողքին պատերազմական տարիների թուրք գրականության մեջ հայտնվեցին նաև գեղջկուհու, գինվորի մոր, ուսուցչուհիների, բուժքույ-

---

[7] Էթաթիզմը Քեմալ Աթաթյուրքի հռչակած վեց գրույթներից մեկն է, որ նշանակում է պետական սեկտորի զարգացում տնտեսության, գլխավորապես արդյունաբերության ոլորտում: Ինչպես գրում է Ս. Բաղդասարյանը, ինքը՝ Քեմալը, էթաթիզմի մասին հայտնել է հետևյալ կարծիքը. «Էթաթիզմի հիմք պետք է ծառայեն մասնավոր ձեռնարկություններն ու անհատական նախաձեռնությունը, սակայն, հաշվի առնելով մեր մեծ ազգի բոլոր պահանջմունքները և այն, որ մասնավոր կապիտալն ընդունակ չէ շատ բան անել, տնտեսությունը պետք է հսկվի պետության կողմից» (Ս. Բաղդասարյան, *Թուրքիայի քաղաքական համակարգը 1920-30-ական թթ.*, «Զանգակ» հրատ., Երևան, 2001, էջ 66-67):

[8] Հունաստանն իր կորցրած տարածքերն ազատագրելու նպատակով Անգլիայի աջակցությամբ 1921թ. նոր հարձակում ձեռնարկեց թուրքական ուժերի դեմ և արդեն մոտեցել էին ընդհուպ Անկարային: 1921թ. օգոստոսի 23-ին Սաքարիա գետի վրա սկսում է վճռական ճակատամարտ և տևում մինչև սեպտեմբերի 13-ը, այն ավարտվեց թուրքերի հաղթանակով: Թուրքական կողմից ռազմական գործողությունները ղեկավարում էր ինքը՝ Մուսթաֆա Քեմալը, որին այս հաղթանակի համար շնորհվեց մարշալի աստճան և «Ղազի» («Հաղթող») տիտղոսը (տե՛ս Մ. Ա. Հասրաթյան, Ս. Ֆ. Օրեշկովա, Յու. Ա. Պետրոսյան, *Թուրքիայի պատմության ուրվագծեր*, ԵՊՀ հրատ., Երևան, 1986, էջ 241-242.):

րերի, ինչպես նաև քեմալական շարժման ընթացքում հերոսացած կնոջ, ռազմի դաշտում որդուն կորցրած տառապող մոր կերպարները[9]:

Յուրատեսակ կնոջ կերպար է ստեղծում նաև Յաքուփ Քադրին: Նրա կին-հերոսուհին տոգորված էր քեմալական գաղափարներով, մտազբաղ երկրի ապագայով, ուներ ազատ մտածելակերպ, համարձակ էր իր անձնական կյանքը տնօրինելու գործողություններում[10]: Եթե թանզիմաթականները ընդամենը նկարագրում էին կնոջ իրավազուրկ և անօգնական վիճակը, ապա քեմալական շրջանի գրողները կերպավորեցին մտավորական թրքուհուն, որը պատրաստ էր մարտնչել հանուն իր ազատության, հանուն իր անձնական երջանկության:

Ընթերցելով «Անկարա» վեպը՝ տեսնում ենք, որ ստեղծագործության առանցքը կազմում էր Սելմայի կյանքի պատմությունը: Սելման, այլևս չցանկանալով հաշտվել երկրի ճակատագրի հանդեպ ամուսնու դրսևորած անտարբերության և վախկոտության հետ, որոշում է բաժանվել նրանից: Երկրորդ անգամ ամուսնանում է քեմալական բանակի սպայի հետ: Սկզբնական շրջանում Սելման իրեն երջանիկ էր համարում, քանի որ կարծում էր, թե գտել է իր կյանքի իսկական ուղեկցին, գաղափարական ընկերոջը, կարծես թե նրանց միավորում էր երկրի հանդեպ ունեցած զգացումները: Թվում էր, թե երկուսն էլ ապրում են երկրի հոգսերով: Սակայն Սելմային սպասվում էր խորը հիասթափություն. Հանրապետության հռչակումից հետո ամուսինը միայն սկսեց հոգ տանել սեփական բարօրության և կարիերայի մասին: Սելման բաժանվում է նաև երկրորդ ամուսնուց:

Միայն երրորդ ամուսնությունից հետո է վեպի հերոսուհին իրեն համարում կատարյալ երջանիկ: Երրորդ ամուսինը՝ առաջադեմ լրագրող, հասարակական գործիչ Նեշեթը, Սելմայի հետ միասին ամբողջովին նվիրվում է նոր կյանքի համար մղվող պայքարին:

Քադրին իր այս վեպում առաջադրում է թուրք կնոջ նոր կերպար: Փաստորեն, զարգացնում է կնոջ ազատագրության թեման՝ ստեղծելով գաղափարի համար պայքարող թուրք մտավորական կնոջ կերպար: Քադրին, վերափոխելով թուրք կնոջ հասարակական, սոցիալական-տնտեսական և իրավական կարգավիճակը, միաժամանակ պահպանում է նրա մշակութային և ազգային ինքնությունը:

Վեպում նաև իրենց արտացոլումն են գտել թուրքական հասարակության զարգացմանը խոչընդոտող տարաբնույթ բացասական երևույթները՝ ավատամահմեդական քարացած ավանդույթները, համատարած կա-

---

[9] И. В. Зородина, *Турецкий рассказ*, Новейшее время, Изд. Московского Университета, 1977, с. 77.

[10] Y. K. Karaosmanoğlu, *Ankara*, yayınlanmamış, Atilla Özkırımlı, İletişim Yayıncılık, 1987, 264 s.

շառակերությունը, անկախության և առաջադիմության դեմ մղվող կատաղի պայքարը, վերնների անտարբերությունը: Հեղինակն իր հերոսուհու երկխոսությունների միջոցով հանդես է գալիս մտավորականության շրջանում արմատացած քաղքենիության դեմ: Սակայն ստեղծագործության սկզբից մինչև վերջ զգացվում է հեղինակի անհանգստությունն ու տագնապը Թուրքիայի ճակատագրի և այն գաղափարների համար, հանուն որոնց տեղի էր ունեցել քեմալական շարժումը:

Քադրին իր այս վեպում ևս շարունակում է խոսել երկրի և հասարակության արևմտականացման անխուսափելիության մասին, միաժամանակ հիշեցնում, որ նոր իւիքնությունը պետք է հիմնել ազգային արմատների վրա, այլապես հասարակությունը դատապարտված է կործանման:

Թուրքիայի Հանրապետությունն ի սկզբանե որպես երկրի զարգացման ուղի ընտրեց արևմտականացման կամ արդիականացման (մոդեռնիզացիա) ճանապարհը: Ինչպես գրում է Ս. Բաղդասարյանը. «Թուրքիան դատապարտված էր գնալ դեպի արդիականացում, որի ընթացքում թուրք ժողովուրդն ապրեց իր ավանդական արժեքների փոխակերպումը, քաղաքական իշխանության հիմքերի փոփոխությունը»[11], բացի այդ անցում է կատարվում **կրոնական-համայնքայինից դեպի աշխարհիկ-ազգայնականի կենսակերպի, տեղի էր ունենում նոր ազգային ինքնության դրսևորում**[12]:

Եվ Յաքուփ Քադրիի կերպարներն այս նոր թուրքական ինքնության կրողներն էին: Վեպում նա առաջ է քաշում հետևյալ միտքը. *«Մակայն այս փուլում այլևս հեղափոխությունից չենք խոսելու: Այստեղ արդեն մի այլ կյանքի կաղապար կա, մեր տեսած ամեն մի բան նոր կյանքի ձև է, կաղապար, սակայն այդ նորի հեղինակը մենք չենք: Մեր հոգում կյանքի նոր սկզբունք, նոր իսկական կյանքի բողբոջները չեն կարողանում բացվել: Իսկ եթե բացվեն մեր երկրի նոր կյանքի պայմանները, ապա այն ոչ միայն մի փոքր զանգվածի, այլ ամբողջ ազգի համար ի հայտ կգա որպես անհրաժեշտություն: Ազգային թուրքը եվրոպականացվելով՝ իր վրա թուրքական ոճի կնիքն է դնելու: Եվրոպականացումը կյանքի անխուսափելի մի գործընթաց է: Բայց այդ պետք է ծառայի ազգային ցանկություններին, ազգային մշակույթին և ազգային բարոյականությանը: ...Նոր ժամանակից ինքնություն ստեղծելու համար նախ պետք է հիշել այդ ինքնության գոյության մասին, նրա ակունքները»*[13]:

---

[11] Ս. Բաղդասարյան, *Թուրքիայի քաղաքական համակարգը 1920-30-ական թթ.*, էջ 102-103:

[12] Ս. Բաղդասարյան, *Թուրքիայի քաղաքական համակարգը 1920-30-ական թթ.*, էջ 102-103:

[13] Y. K. Karaosmanoğlu, *Ankara*, էջ 189:

Քաղրին նաև Հանրապետության վերջնական կայացման համար խիստ կարևորում էր «*անցյալի հետ տևական կապի փրկումը*», այսինքն՝ նկատի ուներ թուրքերի կյանքում Օսմանյան կայսրությունից մնացած բազմաթիվ բացասական երևույթները՝ կրոնական մոլեռանդությունը, պահպանողականությունը, բյուրոկրատիան, որոնք խանգարում էին նոր ինքնության կերտմանը: Միաժամանակ նա առաջ է քաշում այն միտքը, որ «Ո՛չ կապիտալիզմը, ո՛չ սոցիալիզմը թուրքական հեղափոխության համար օրինակ չեն կարող լինել»[19]: Ականավոր թանգիմաթական զրող Նամըք Քեմալի՝ տասնյակ տարիներ թուրք մտավորականությանը տանջող այն հարցադրմանը, թե արդյո՞ք հնարավոր կլինի թուրք հասարակության մոդեռնիզացիան, Յաքուփ Քաղրին տալիս է հետևյալ պատասխանը. «*Մենք միայն հավատում ենք մեր գործի առաջընթացին*»: Ըստ նրա՝ «*Արևմուտքը հակասական մի աշխարհ է: Այսօրվա արևմտյան քաղաքակրթությունը միայն Վերածնունդը չէ, այն նաև մինչև այսօր տեղի ունեցած արյունալի պատերազմների պտուղն է*»[20]:

Զարգացնելով արևմտականացման գաղափարը՝ Քաղրին գրում է, թե ինչ իմաստ ունի փոխառել Արևմուտքից քաղաքակրթության այդ նոր տարրերը, եթե դրանք չեն կարողանալու կիրառել: «Մենք Արևմուտքի իշխող բայբայված դասի սպառումը և արտադրության պայմանները մեզ պետք է ծառայեցնենք: Ճիշտ ինչպես մի վտանգավոր դեղի պատվաստման գիտական գաղափարը, որից գուցե վերջում մեծ օգուտ լինի»[21]:

Վեպի երրորդ մասում պատմվում է Նեշեթ Սաբիթի և Սելմայի, համատեղ երջանիկ կյանքի մասին: Յաքուփ Քաղրին այս բաժնում արդեն իրականությունը մի կողմ է նետում, սկսում է պատմել մի հեքիաթային կյանքի մասին: Այն հեղինակի պատկերացմամբ նոր Թուրքիայի կյանքն է, և ամբողջությամբ կառուցված է քաղրոյականների գաղափարների հիման վրա՝ «Աստվածային առաջնորդներ», «քաղաքների բարգավաճում»: Նա ասում է. «1928 թվականի այբուբենի, պատմության, լեզվի հետ կապված բարեփոխումները մտքի և գիտության արթնացման խթաններ դարձան: Քեմալական պայքարին խարսխված ընթանում էր նաև տնտեսական զարգացման պատերազմը: Այս ամբողջը ծառայում է պետությանը, տերտնօրեն կոչված չարիքը այլևս չկա, կան բանվորներ, ինժեներներ...: Ահա պետության առանցքը կազմող հիմնական առաջատար ուժը»[22]: «Անկարայի» վերջին զլխում էջերով ներկայացվում են այս գեղեցիկ կյանքի մասին

---

[19] Y. K. Karaosmanoğlu, *Ankara*, էջ178:
[20] Y. K. Karaosmanoğlu, *Ankara*, էջ 190:
[21] Y. K. Karaosmanoğlu, *Ankara*, էջ 195:
[22] Y. K. Karaosmanoğlu, *Ankara*, էջ 199-200:

հեղինակի պատկերացումները։ Փաստորեն ռեալիստ գրող Յաքուփ Քադրին «Անկարա» վեպում տուրք է տալիս ռոմանտիզմին՝ կերտելով Թուրքիայի երևակայական սպագան։ Քադրոական Յաքուփ Քադրին հենց այդ ուտոպիայի հիմնադիրն ու շինարարն էր։

Հետաքրքրական է, որ վեպը գրելուց շուրջ քսան տարի անց Քադրին վերաարժևորում է իր գաղափարները. «*Այս իմ վեպում առաջադրված պատրանքային Թուրքիայի ստեղծելու քայլերն արդյո՞ք արվում են։ Ես հույս ունեի քսան տարվա ընթացքում Աթաթուրքի գլխավորությամբ և առաջնորդությամբ հասնել այդ պատրանքային Թուրքիային, սակայն այժմ այդ քսան տարիների վրա ևս քսան տարի է անցել, բայց մեր սոցիալական, մշակութային, տնտեսական վիճակը դեռևս վեպիս երկրորդ գլխում նկարագրած անմխիթար վիճակում է մնացել*»[23]։

Սակայն երբեք Քադրին չբարձրաձայնեց իրական պատճառների մասին, չգրեց, որ թուրքական ղեկավարությունը չուներ արդիականացման ամբողջական և համակարգված ծրագիր, որ այն սահմանափակվում էր միայն թուրքական ազգային պետության կայացման նպատակով, չգրեց երբևէ այն մասին, որ արևմտականացման-արդիականացման արժեքներն անհամատեղելի էին թուրք ազգի սոցիալական, տնտեսական, էթնոմշակութային կառուցվածքներին, և վերջապես հոգեկերտվացքին ու արժեքներին, չգրեց երբեք Հանրապետական Թուրքիայում ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ փուլ առ փուլ իրականացված բարբարոս քաղաքականության մասին։ Այլ ընդհակառակը, երկրում ստեղծված իրավիճակը բացատրում էր որպես աթաթուրքյան սկզբունքներից հեռանալու հետևանք։

Ամփոփելով՝ նշենք, որ Քադրիի «Անկարա» վեպի առաջին մասը թեև գրված է ռեալիստական մեթոդի կիրառումով, սակայն հեղինակը, հատկապես երրորդ գլխում ամբողջովին հեռանում է իրապաշտությունից և անցում կատարում ռոմանտիզմի՝ պատկերելով իր երազած Թուրքիան։ Նրա կերպարները թեև տոգորված էին քաղրոյական գափարներով և հարթում էին արևմտականացման ճանապարհը, սակայն շարունակում էին մնալ էութենապես և արժեհամակարգով թուրք ազգայնական։ Փաստորեն, Քադրին իր այս վեպում կերտում և առաջադրում էր նոր ազգային ինքնություն ունեցող թուրքի կերպարներ, ինչպես ինքն է գրում. «*Ազգային թուրքը եվրոպականացվելով՝ իր վրա թուրքական ոճի կնիքն է դնելու*»։ Եվ ահա քեմալական գաղափարախոսության ջատագով ու պաշտպան քաղրոականները ձգտում էին կերտել թուրքի հենց այս մոդելը, որի գեղարվեստական դրևորումը տեսնում ենք Քադրիի «Անկարա» վեպում։

---

[23] Ş. Kurdakul, *Çağdaş Türk Edebiyatı*. c. 2. 4-üncü basım, Ankara, 1994, s. 78.